Սառայի ՄՌՏ հետազոտությունը

Ջուլիան Դոման

Հիմնված է իրական պատմության վրա

«Երբ Քրիստոսը երկրի վրա էր, Նա խոստացավ, որ կուղարկի Սուրբ Հոգուն՝ մեր ճշմարիտ, հավերժական բարեկամին, մխիթարելու մեզ» (Children's Songbook, *105)*

«Կարծում եմ Սառան կարիք ունի անցնելու ողնաշարի ՄՌՏ հետազոտություն»,- ասաց բժիշկ Ֆրանկը: Նա ժպտաց Սառային: «Ես կգրանցեմ դա վաղվա համար: Մի քանի րոպեից կվերադառնամ»:

Սառայի ողնաշարը տևական ժամանակ ցավում էր: Երբ նա վեր կացավ այդ առավոտ, մեջքի ցավից չէր կարողանում ուղիղ կանգնել և հազիվ էր կարողանում քայլել: Սառան ու նրա մայրն այցելեցին բժիշկ Ֆրանկին՝ խնդիրը պարզելու համար:

ԱՄՈՆ Ռ. ԴԵՅԼՈՒ ՀԱՅԵՑԻ

«Էլի՞ ՄՌՏ»,- հարցրեց Սառան, նայելով մայրիկին: Նա մի անգամ արդեն անցել էր այդ հետազոտությունը: Նա հիշեց, թե ինչպես էր վախենում, պառկած մեծ խողովակի մեջ, որը լուսանկարում էր նրա ներքին օրգանները:

«Հասկանում եմ»,- ասաց մայրիկը: «Բայց նկարները կօգնեն բժիշկ Ֆրանկին հասկանալ, թե ինչ խնդիր կա քո ողնաշարի հետ կապված: Ես գիտեմ, որ դու կարող ես դա անել: Ես այնտեղ կլինեմ, քեզ հետ»: Մայրը սեղմեց Սառայի ձեռքը:

«Բայց դու չես կարող ինձ հետ ներս մտնել»,- ասաց Սառան: Նա գլուխը կախեց և արցունք հոսեց նրա այտի վրայով: Մայրը նրա հետ կլիներ սենյակում, սակայն երբ Սառան մտներ սարքի մեջ՝ մենակ էր լինելու:

Մայրը փաթաթվեց Սառային: «Ճիշտ է, բայց գիտե՞ս, թե ով *կարող է* լինել այնտեղ և մխիթարել քեզ»:

Սառան հիշեց, որ լսել էր Սուրբ Հոգու անուններից մեկը. *Մխիթարիչ:* Գուցե Սուրբ Հոգին կօգներ նրան այդքան չվախենալ:

«Սուրբ Հոգի՞ն»,- հարցրեց Սառան:

Մայրը գլխով արեց: «Ճիշտ է: Դու կարող ես աղոթել, որ Սուրբ Հոգին օգնի քեզ: Ես ու հայրիկը նույնպես կաղոթենք քեզ համար»:

Դա Սառային լավ միտք տվեց: «Կարո՞ղ եմ հայրիկին խնդրել, որ ինձ օրհնություն տա»:

Մայրը ժպտաց: «Իհարկե: Ես գիտեմ, որ նա սիրով դա կանի»:

Այդ երեկո հայրը դրեց իր ձեռքերը Սառայի գլխին և նրան քահանայության օրհնություն տվեց: Երբ նա օրհնեց դստերը, որպեսզի մխիթարվեր Սուրբ Հոգու կողմից, մի ջերմ զգացում պատեց Սառային: Այդ զգացումը նրա հետ մնաց ամբողջ գիշեր:

Հաջորդ օրը Սառան պառկեց պատգարակին, որը պետք է սահուն տաներ նրան ՄՌՏ սարքի խողովակի մեջ: Նա մտովի կրկնում էր այն խոսքերը, որոնք հայրն ասել էր օրհնության ժամանակ. *Սուրբ Հոգին այնտեղ կլինի և կմխիթարի քեզ:* Սառան ամուր սեղմեց մոր ձեռքը: Այնուհետև բուժքույրն ուղարկեց պատգարակը խողովակի մեջ:

ՄՌՏ սարքը, տարօրինակ ձայներ հանելով, նկարեց նրա ողնաշարը: Սառան պետք է անշարժ պառկեր, որպեսզի նկարները պարզ լինեին: Նա մի պահ տագնապեց, սակայն նորից զգաց այն ջերմ զգացումը: Դա նման էր մայրիկի գրկախառնությանը, կամ փափուկ վերմակի հպումին: Նա գիտեր, որ ամեն ինչ լավ կլինի: Մինչ նա կգիտակցեր դա, ՄՌՏ-ն ավարտվեց:

Գրասենյակում բժիշկ Ֆրանկը ցույց տվեց ողնաշարի նկարները Սառային ու նրա մորը: «Շատ ապրե՞ս, որ անշարժ էիր պառկել»,- ասաց բժիշկ Ֆրանկը Սառային, ծնկի իջնելով նրա կողքին: «Քո ողնաշարի այս նկարները ցույց տվեցին, որ դու պետք է վիրահատվես, որպեսզի կարողանաս լավ քայլել»:

Սառան կարկամեց:

«Լավ կլիներ, որ վիրահատությունը շուտ անեինք»,- ասաց բժիշկ Ֆրանկը, նայելով Սառայի մորը: Ապա նա շրջվեց Սառայի կողմը: «Դրանից հետո կպահանջվի մի քանի շաբաթ, որ դու քեզ նախկինի պես առողջ զգաս, բայց այսօր, տեսնելով քեզ, կարող եմ ասել, որ ամեն ինչ լավ կլինի»:

Սառան մտածեց բոլոր այն գործողությունների մասին, որոնք նա կկարողանա կատարել, երբ բժիշկ Ֆրանկը բուժի իր ողնաշարը: *Ես կկարողանամ վազել, լողալ և ցատկել տերևակույտի մեջ:* Նա կարոտել էր բոլոր այդ բաները: Սակայն վիրահատությունն ավելի վախեցնող էր, քան ՄՌՏ-ն: Ապա Սառան հիշեց իր աղոթքները և իր հատուկ օրհնությունը: Երկնային Հայրն ուղարկել էր Մխիթարիչին իր մոտ: Նա նորից կօգնի իրեն:

Նա նայեց բժիշկ Ֆրանկին և հարցրեց. «Հետո ես կարո՞ղ եմ ցատկել տերևների մի մեծ կույտի մեջ»:

Բժիշկը լայն ժպտաց: «Հետո դու կարող ես ցատկել մեծ տերևակույտի մեջ»: ■

Հեղինակն ապրում է Կոլորադոյում (ԱՄՆ):



Էնալայզ Ֆ., 6 տարեկան (Յուտա, ԱՄՆ)

Երբ ես հինգ տարեկան էի, ինձ վիրահատել էին, հեռացնելով նշիկներս և ադենոիդներս: Ես իրոք վախեցած ու նյարդայնացած էի: Հայրս օրհնություն տվեց ինձ: Օրհնությունից հետո ես այլևս չէի նյարդայնանում, և մենք երկուսս էլ ուրախ էինք, քանի որ զգում էինք Սուրբ Հոգին: